

ՅԵՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ ԳՐՈՆԴԱԽԼ

## ՀԱՃԱԽ ՈՒՐԱԽ ԵՄ

Նամակ ամուսնու սիրուհուն

ՎԵՊ

Թարգմանիչ՝

Ալեքսանդր Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք  
Երևան 2018

Translation of this book was supported by

**DANISH ARTS FOUNDATION**

Jens Christian Grøndahl Tit er jeg glad (Often I am Happy)

Յեղիմակը գրել է բնագիրը դանիերեն և անգլերեն:

## **Գրոնդահլ, Յենս Բրիտանիան**

**ՀԱՃԱԽ ՈՒՐԱԽ ԵՄ. նամակ ամուսնու սիրուհուն –  
Վեպ, Եր.: Գիտանք, 2018, 70 էջ.**

Երկրորդ ամուսնու հանկարծակի մահից հետո Էլինորը մտովի նամակ է գրում նրա մեռած առաջին կնոջը՝ իր մտերիմ ընկերուհի Աննային, որը նախկինում իր առաջին ամուսնու՝ Յենինգի սիրուհին էր: Երկու զույգի անցյալը և Էլինորի ու երկրորդ ամուսնու որդիների ներկան նկարագրող այս վիպակը վառ գույներով ներկայացնում է դանիական ընտանիքը XXI դարի սկզբին: 70-ամյա կնոջ անունից տղամարդ հեղինակի գրած այս պատմությունը լույս է տեսել 2016 թվին և արդեն հրատարակվում է 11 երկրում՝ ներառյալ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան, Չինաստանը:

Յենս Գրոնդահլը Դանիայի Ժամանակակից գրականության նշանավոր գրողներից է: Բազմաթիվ գրական մրցանակների դափնեկիր է: Նրա գրքերը հրատարակվել են ավելի քան 15 լեզվով՝ ներառյալ անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն:

ISBN 978-9939-810-978-9939-810-41-6

Copyright © Jens Christian Grøndahl, 2016

Translation copyright © Jens Christian Grøndahl, 2017

© «Գիտանք», թարգմանության և ձևավորման համար, 2018

Ես հաճախ ուրախ եմ, մինչդեռ ուզում եմ լաց լինել,  
քանի որ ոչ մեկի սիրտը չի կիսում ուրախությունս:  
Ես հաճախ տխուր եմ, մինչդեռ ստիպված եմ ծիծաղել,  
որպեսզի ոչ ոք չտեսնի իմ երկչուտ արցունքը:  
Բ. Ս. Ինգեսման

ԱՅՑԾ ՔՈ ԱՍՈՒՍԻՆԸ նույնպես մեռած է, Աննա: Քո ամուսինը, իմ ամուսինը:  
Կուզենայի՝ պառկեր կողքիդ, բայց հարևաններ ունեն՝ մի փաստաբան և մի  
տիկին, որը թաղվել է մի քանի տարի առաջ: Փաստաբանը վաղուց այնտեղ  
էր, երբ դուք միացաք նրան: Հաջորդ շարքում մի ազատ հողակտոր գտա  
Գեորգի համար. քո գերեզմանից երևում է նրա տապանաքարի հետնամասը:  
Կրաքար ընտրեցի, թեև քարտաշն ասաց, որ հողմադիմացկուն չէ: Հետո՞ ինչ:  
Չեմ սիրում գրանիտը: Երկվորյակները կուզենային գրանիտ. այս հարցում  
նրանք, որպես բացառություն, համամիտ էին: Գրանիտը շատ ծանր է, իսկ  
մեր Գեորգը բողոքում էր, որ ծանրություն է զգում կրծքին: Պետք է դրան ա-  
վելի լուրջ վերաբերվեինք, բայց նա անտեսեց: Սկզբում տնքաց, բայց երբ ես  
նույնպես մտահոգվեցի, նա անտեսեց: Գեորգին բնորոշ էր:

Յնցուղ ընդունելիս նա տապալվեց հատակին: Ես անմիջապես հասկացա,  
որ ինչ-որ բան է պատահել, կամ գուցե լոկ հիմա եմ կարծում, թե հասկացա:  
Նա տնքաց, և նրա թաց, ծանր մարմինը տեղաշարժելը անբնական զգացում  
էր: Նա դեռ գիտակից վիճակում էր, երբ պառկեցրի մահճակալին: Բայց երբ  
հիվանդակառքը եկավ, ամեն ինչ վերջացած էր: Նա չէր փոխվել, ավելի ծեր էր  
երևում, բայց դեռ բավականին գրավիչ էր: Փորն ավելի քիչ էր ցցված, երբ նա  
պառկած էր մեջքին: Այդ տարիքում դու նրան երբեք չես տեսել, բայց չէ՞ս  
կարծում, որ յոթանասուներեք իրականում շատ չէ: Կամ այդ առունով յոթանա-  
սունը: Նրան դու կարող էիր գտնել հախճաասալին պառկած տաք ջրի շիթերի  
տակ: Բնական կլիներ, որ հենց դու գտնեիր: Համաձայն ես, չէ՞: Նա միշտ շատ  
երկար էր այնտեղ կանգնում: Եվ հեշտությամբ կարող էր կանգնած մնալ, եթե  
սիրտը սնող երակը չպայթեր: Եվ հենց քո կյանքը նույն կերպ կշարունակվեր:  
Ես ո՞վ կլինեի քո կյանքում: Ո՞վ կլինեի իմ կյանքում: Հիվանդակառքին սպա-  
սելիս ես նրան փաղաքշում էի, թեև չգիտեի՝ արդյո՞ք զգում է որևէ բան:  
Նստած էի նրա կողքին, և եկավ պահը, երբ այլևս զգալու բան չկար: Երբ մար-  
դը մահանում է, իրականությունը դադարում է պատասխանել նրա բոլոր  
մտքերին ու զգացումներին կամ պարզապես արձագանքել դրանց: Մահը  
լռեցնում է կյանքը: Իրականը ի վերջո դառնում է մեր թշնամին, Աննա:

Թաղման հաջորդ օրը հեծանվով նորից գնացի գերեզմանոց: Մի քանի  
ծաղիկ վերցրի ու դրեցի քո տապանաքարի առաջ: Այլ դեպքերում ծաղիկ բե-  
րում էի լոկ քո ծննդյան օրը: Առաջին տարիներին ես հաճախ էի գալիս՝ հիմ-

նականում մենակ: Գեորգը չէր սիրում զալ այստեղ, և ի վերջո դադարեցի ասել նրան, որ այցելել եմ քո գերեզմանը: Այդ ժամանակ արդեն վաղուց չէի հարցնում նրան, թե ինչու չի գալիս: Չեմ կարծում, թե նա երբևէ լիովին ներել էր քեզ, բայց մույնիսկ դա նա հավանաբար չէր ուզեմա ընդունել, եթե հարցնեի: Ես կարող էի մեկնաբանել նրա պատասխանը՝ որպես ակնարկ, որ ընդունակ չեմ եղել լրիվ փոխարինել քեզ: Գեորգը շատ նրբանկատ էր, և ես կարծում եմ, որ նա իրոք սկսեց ինձ սիրել: Գիտե՞ս, տարիներն անցան, և ի վերջո մենք պատկանեցինք միմյանց պարզապես այն պատճառով, որ ապրում էինք կողք-կողքի: Երիտասարդ տարիքում մենք թերագնահատում ենք սովորության զորությունն ու նաև դրա բարեշնորհությունը: Տարօրինակ բառ է, բայց տեղին է:

Երբ դու այլևս չկայիր, ես ներելու խնդիր չունեի: Անհմաստ է կանգնել այստեղ և ներել կամ չներել տապանաքարը, ինչից էլ որ դա լիներ՝ կրաքարից թե գրանիտից: Ավարտվելուց հետո քո կյանքը, ցանկացած կյանք, վերածվում է մի բուռ փաստերի: Վերածվել է: Զանազան բաներ կատարվեցին, և մենք կարող ենք տարբեր կերպ վերաբերվել դրանց: Դու մտար քո մտերիմ ընկերուհու ամուսնու անկողինը և թույլ տվեցիր, որ նա քեզ տանի մահվան գիրկը: Իհարկե, ձեզնից ոչ մեկը դրան չէր սպասում: Բայց ինձ հարց եմ տալիս՝ դու ինչի՞ էիր սպասում: Առաջարկելու էիր, որ մենք պարզապես փոխանակե՞նք: Նման բաներ պատահում են:

Ժամանակին, երբ դեռ մտորում էի իմ անպատասխան հարցերի մասին, ես եկա եզրակացության, որ դու հավանաբար չէիր էլ սպասում որևէ բանի: Նա, ով սիրահարված չէ, դժվարությամբ է պատկերացնում, թե սիրահարները որքան անտարբեր են ուրիշների կամ ապագայի նկատմամբ: Նրանք պարուրված են երանությանմբ, որը սփռվում է նրանց շուրջը բոլոր ուղղություններով: Այդ պահը անհնար է փոխարինել հաջորդ պահով կամ որևէ այլ պահով: Յուրաքանչյուրին ամբողջովին զբաղեցնում է մյուսի դեմքն ու մարմինը և տարօրինակ խանդը, որը մույնիսկ ես աղոտ հիշում եմ, թեև շատ վաղուց եմ սիրահարված եղել: Այդ խանդը չի վերաբերում ախտյաններին կամ մտքերին նրանց մասին. նման խանդից առաջ առաջանում է մի այլ խանդ, որը վերաբերում է լոկ այն մարդուն, որին սիրում ես: Խանդում ես նրա մարմնին, որովհետև մարմինը ավելի մոտ է, քան երբևիցե դու կկարողանաս մոտենալ նրա մտքերին:

Ոչ, դու չէիր ենթադրում ինձ կամ Գեորգին վերաբերող որևէ բան և անկասկած չէիր ենթադրում, որ մի օր ես կանգնելու եմ քո շիրիմի առաջ քո ամուսնու և քո երկվորյակների հետ: Հասկանո՞ւմ ես՝ կար ընդամենը մեկ գերեզման, որի առաջ կարող էինք կանգնել: Տարիներ շարունակ ինձ երբեմն հետապնդել է մույն անպատեհ միտքը: Իսկ եթե Հենինգը ինչ-որ տեղ դեռ ո՞ղջ

է: Գլխուն չի տեղավորվում այն միտքը, որ մարդիկ կարող են պարզապես անհետանալ. հանդերձյալ կյանքի պես մի բան է: Անհնար է պատկերացնել: Բայց մենք այնտեղ էինք՝ Գեորգը, երկվորյակները և ես: Իհարկե, սկզբուն բավական երկար ժամանակ ես բոլորովին չէի ցանկանում նրան:

Վերջերս երկվորյակները թշնամացած էին: Գուցե ես չափազանց կտրուկ եմ, չափազանց վճռական: Երևի անգիտակցաբար մի քիչ կոշտացած եմ, բայց ամեն դեպքում համարում եմ, որ նրանք չափից ավելի ոյուրազգաց են: Ես իհարկե հարգում եմ նրանց վիշտը, ինքս էլ եմ ողբում նրանց հոր կորուստը: Իրոք ողբում եմ, բայց ինչո՞ւ պետք է զգամ դա ասելու կարիքը: Կարծում եմ՝ նրանք ինչ-որ կասկածներ ունեն: Չեմ հասկանում, թե այժմ, երբ Գեորգը չկա, ես ինչու պետք է պահակի պես մնամ նրանց մանկության տանը: Խնամեն կահույքը, պահպանեն սենյակներում աթոռների ու սեղանների դասավորությունը, մաքրեն փոշին: Ես իհարկե կարող էի մեկ տարի սպասել, թողնել, որ անցնի նրա մահվան տարելիցը, և նոր որոշում ընդունել, բայց ինչո՞ւ: Նրանցից ոչ մեկը մտադիր չէ տեղափոխվել այդ տուն, իսկ Գեորգը երեք շաբաթ անց նույնքան մեռած կլինի, որքան մեկ տարի հետո: Ես լաց չեղա թաղմանը, գուցե այդ պատճառով եմ իմ զգացմունքները հարուցում նրանց կասկածը: Ես դադարել էի լաց լինել: Հիվանդանոցից վերադառնալով՝ ամբողջ գիշեր լաց եղա, միջև որ քնեցի բազմոցին առանց գոնե մեկ լամպ վառելու: Չկարողացա պառկել մահճակալին: Պատճառը այն չէր, որ Գեորգը մահացել էր այդ մահճակալին. դրա ապացույցն այն էր, որ ես մի քանի շաբաթ չփոխեցի սպիտակեղենը: Քնեցի այդ անկողնում միմչև որ այլևս չէի զգում նրա հոտը: Քեզ հետ մի բանի մասին կուզենայի խոսել՝ Գեորգի հոտի: Արդյո՞ք հնարավոր է ճանաչել ինչ-որ մեկի՝ առանց բառեր գտնելու, որպեսզի նկարագրես նրա հոտը: Գեորգի հոտը փաստացի իմ հուշերում է և մնում է այնտեղ առանց նկարագրվելու: Այնտեղ է, բայց այժմ որպես ընդամենը լռակյաց հուշ:

Բայց նրանք՝ քո որդիները, երևի մտածում են, որ ես անսիրտ եմ: Ինչո՞ւ չեմ կարող ընդամենը համարել, որ ես ցնցված վիճակում եմ: Արդյո՞ք մենք չենք կարող պարզապես ասել, որ ես ցնցված եմ, Աննա: Խնդիրն այն է, որ իրականում ինքս էլ չեմ կարող դա ասել: Տնցված վիճակում մարդը կմտածի՞ անշարժ գույքի գործակալի հեռախոսը փնտրելու մասին: Նրանք տարակուսում են, որ ես զանգեցի գործակալին և տունը դրեցի վաճառքի՞՝ նախքան կտակակատարը ուղարկեց գույքի արժեքի գնահատումը: Գիտե՞ս, ես միշտ դժվարությամբ եմ որոշել գործոնների առաջնությունը: Դա երևի կամայական է լինում, չէ՞: Այն, թե ով առաջինը սիրեց այս կամ այն տղամարդուն: Սերը կար. դա է կարևորը. ըստ Ստեֆանի սիրած արտահայտության՝ արդյունքը: Տարօրինակ է, որ նրանք՝ Ստեֆանն ու Մորտենը, այդքան տարբեր են. ո՞վ կմտածեր, թե երկվորյակներ են:

Սերը կար: Այլևս չկա՞: Ոչ, կա, մարդու հետ չի մահանում, բայց արդյո՞ք կարող է ինքնուրույն երկար ճախրել դատարկ սենյակներում՝ փոշու հատիկների պես արևի ճառագայթում: Սերը ե՞րբ է դառնում զգացմունքի հուշ, և այլևս ինքնին զգացմունքը չէ: Ես քեզ սիրում էի, Աննա, և այդ սերը ավելին էր, քան իմ զայրույթը: Մեզմիջ ոչ մեկը չէր կարող դա իմանալ: Ես սիրեցի Գեորգին քո փոխարեն, դա նույնպես չէի կարող իմանալ, բայց ապրել լռակյաց սենյակներում, որտեղ նա չկա՞: Ինչ-որ պատճառով դա թվում է անհնարին. կուզենայի հասկանալ՝ ինչու:

Եվ նախքան հասկացա, արդյունքը այն էր, որ երեկ կտակակատարի գրասենյակում մասնակցեցի հանդիպման և զգացի որդիներիդ զսպված հուզմունքը: Դա ի՞նչ կոչեմ: Կրողվմո՞ւնք: Հիասթափությո՞ւն: Ամեն դեպքում դա զգացմունքների շփոթեցնող խառնուրդ էր, որը տարածվում էր կտակակատարի երկար, փայլեցրած սեղանի շուրջը: Գործնական ակնոցով և ներկված աչքերով հավատարմատար կինը որդիներիդ տարիքին էր, հագին կիպ տաբատ էր և համապատասխան բաճկոն: Կարծում եմ՝ Մորտենը նրան համարում էր սեռագրավիչ: Կասկածում եմ, որ նա թուլություն ունի հենց այդ տեսակի սառը, ինքնավստահ կանանց հանդեպ, որովհետև ինքը լիովին չպատկանեց միջնախավին: Իսկ Ստեֆանը առանձնապես տպավորված չէր. սովորականի պես թափանցիկության և ուղղամտության մարմնավորում էր՝ իսկական դրամագործ: Որդիներիցդ մեկը դարձավ արժեթղթերի վաճառամիջնորդ, Աննա. չեմ կարծում, թե նման բան կպատկերացնեիր: Մյուսը արվեստի պատմաբան է, ինչը հավանաբար քեզ ավելի առնչվող կհամարեիր, քանի որ դու բավականին փոփոխամիտ էիր՝ չնայած քո կատարյալ շարժումնին: Կտակակատարի զգոն հայացքը նրան երևի հիշեցրեց Վերմեերի *Մարգարտե ականջօղով աղջիկը* նկարը: Ես ինքս արդեն անրջում էի, երբ ինձ ուշքի բերեցին: *Դուք տունը դրել եք վաճառքի՞*: Հարցնողը կտակակատարն էր, և դու գիտես, թե դա ինչի նման է, երբ ինչ-որ բան հավաստիացվում է հարց տալու միջոցով: Իհարկե ոչ, դու այլևս դա չգիտես, ոչինչ չգիտես, ականջ չունես նման բան լսելու համար: Վարդագույն բլթակներով գեղեցիկ ականջներդ այլևս չկան:

Քեզ դիմելը անհեթեթություն է, բայց եթե դա չանեմ, ես նույնպես կարծես ընդամենը մի փաստ կլինեմ, տապանաքարի պես, ոչ ավելին: Եվ հուշերս գոնե մի քիչ չէին համապատասխանի իմ մտքերին ու զգացմունքներին: Քառասուն տարի եղել ես աչքիս առաջ, Աննա: Դու կանգնեցիր այդտեղ, մեկ օր ավել չապրեցիր: Մնացիր անցյալում: Բայց բերանս չորանում է, և ինձ մեղավոր եմ զգում, նախքան ինձ ինչ-որ բանում կմեղադրեն: Ես ասացի, որ ուզում էի նրանց տալ իրենց հասանելիքը, բայց լռեցի, երբ Ստեֆանը ինձ հայացք նետեց: Նա առաջ թեքվեց, և փայլուն սեղանին ես տեսա հինգ անպարզ փոքրիկ հետքեր, որոնք աղոտացան ու վերացան այն տեղում, որտեղ

նրա մատներն էին: Նա բարձրացրեց ձեռքը՝ կարծես մեղմելու համար զայրույթը, որը մենք ոչ մի դեպքում պետք է չընկալեինք նրա ձայնում: Դե մենք միշտ կարող էինք խոսել դրա մասին, ու ես իհարկե կարող եմ մնալ իմ տանը, որքան ուզեմ, և եթե դա փողի հարց է... Մենք միշտ կարող էինք խոսել դրա մասին, կրկնեց նա և շրջվեց Մորտենի կողմը, որը գլխով արեց: Կտակակատարը ինչ-որ բան ասաց անբաժանելի ունեցվածքի մասին, և ես մտածեցի մեր տան մահճակալի և այն մասին, թե դեռ որքան անսովոր էր իմ գիշերների անբաժանելի անդորրը: Սպիտակեղենը, բարձի երեսները, նուրբ բամբակե գործվածքը: Փոխելու ժամանակն էր:

Ասացի, որ դա այլևս կարևոր չէ: Հայտնեցի նրանց, որ արդեն գտել եմ ապրելու մի այլ տեղ և տեղափոխվում եմ ամսվա վերջին: Քաղաքի կենտրոնական հրապարակից լսվում էր El Condor Pasa երաժշտությունը, որը սրինգներով նվագում էին հնդկացիները: Չգիտեմ, թե որքան ժամանակ անշարժ ու լուռ նստեցի՞նք այնտեղ. երեք շաբաթ առաջ եկեղեցում նույն կերպ նստած սպասում էինք արարողության ավարտին:

ԱՄՌԱՆԸ, երբ անձրև չէր գալիս, Գեորգն ու ես սովորաբար հեծանվով էինք գնում Ստեֆանի և Միեի տուն: Դա նրան մարզվելու հնարավորություն էր տալիս: Նրանց տունը ճահճուտի ու ձիավարժության դպրոցի մյուս կողմում էր, և ստիպված էինք իջնել և ճանապարհի մի մասը հրել հեծանիվը: Կանաչապատ ստվերոտ գառիվայր էր այլ առունով հարթ շրջապատի կենտրոնում: Երբ մեճակ էի, սիրում էի կանգնել և դիտել ձիերին ախռում: Ձիերի ուրվագծերը և մաշկից անդրադարձող արևի շողերը ինձ միշտ ավելի մեծ հաճույք էին պատճառում, քան կարելի էր ակնկալել այդ տեսարանից: Ստեֆանի ու Միեի տունը իհարկե ավելի մեծ էր, քան մերը, և ավելի լավ փողոցում էր: Ես դա պարզապես նշում եմ, որովհետև կյանքիս ընթացքում բոլորը միշտ ենթադրել են, որ ամեն ինչ կարող է միայն առաջ ու վեր շարժվել: Արժեթղթերի վաճառամիջոցորդը վաստակում է ավելին, քան ապահովագրության գործակալը, և կարծես նույնիսկ Գեորգը դա համարում էր բնական: Սա այն տիրույթն է, որտեղ գործոնների առաջնությունը կամայական չէ: Հարուստ, ավելի հարուստ. տրամաբանական շարք է: Հակառակը հազվադեպ է լինում, բայց Ստեֆանն ու Միեն նման բան նույնիսկ չեն էլ ենթադրում՝ բնական համարելով իրենց հաջողությունը: Մենք՝ հետպատերազմյան մեր սերունդը, տարբերվում ենք: Մեր մտքում դրոշմված կարգախոսը պահանջում է, որ երբեք նորից չաղքատանանք: Նույնիսկ այդ պարագայում քեզ թույլ ես տալիս զարմանալ, որ փողի լիությունը, որին նրանք հասել են, դարձել է նրանց կյանքի նպատակը, իսկ «շուկան»՝ նրանց դավանանքը: Այո, ներիր, բայց իմ ծեր տարիքում ես դարձել եմ համայնավար: Դժվարանում եմ ըմբռնել այն,

որ հարուստները անկարող են ազատվել իրենց հարստությունից: Պատկերացնո՞ւմ ես, Միեն գնում է հացի փուռ իրենց *Ռեյնջ Ռովերով*՝ լոկ ցույց տալու համար շրջապատին, որ ունի այն:

Չէի կարողանում հասկանալ, թե նրանք ինչու են տուն գնել Գեորգից ու ինձնից այդքան մոտ: Նրանց փոխարեն ես տուն կգնեի քաղաքի մյուս ծայրին: Նախ՝ Գեորգը անչափ ուրախ կլիներ, որովհետև այդ պատճառով ստիպված չէինք լինի հաճախ գնալ նրանց տուն. նա զարմացած ինձ նայեց, երբ պատմեցի, թե մի կին ինձ ինչ ասաց լողավազանում: «Կարևորը կնոջ ընտանիքի համբավն է, և ամուսինը կապվում է հենց նրա ընտանիքին»: Ստեֆանի ու Միեի պարագայում նա իրավացի էր, և ես անգամ կարծում եմ, որ այդ տունը գնելով, Միեն կհսագիտակցաբար նախապես փորձեց հատուցել դրա դիմաց: Մենք մոտ էինք լոկ աշխարհագրական առումով: Եվ ես նույնիսկ որոշեցի սիրալիք սկետուր լինել, երբ Ստեֆանը եկավ ասելու Միեի ընտանիքի մասին: Միեին ճանաչում եմ տասնյոթ տարի, և մենք միշտ խոսել ենք ծեծված բաներից: Բանն այն չէ, թե նրան չեմ սիրում, և չեմ կարծում, թե նա անմիջականորեն ինչ-որ բան ունի իմ դեմ, գուցե միայն մտքում. բայց նա մնաց կառչած իր ծնողներին: Նրանք դեռ թագավոր ու թագուհի են, օրվա ընթացքում նա մի քանի անգամ զանգում է նրանց: Նույնիսկ չկարողացավ առաջարկել ամուսնու կենացը նրա հիսնամյակի տարեդարձին՝ առանց ծնողների հետ նախապես խորհրդակցելու:

Գիտեմ, Աննա, որ սրտիս մոտ եմ ընդունում: Ամեն դեպքում դա իմ գործը չէ: Դու ավելի լավ կկարողանայիր զբաղվել դրանով և չէիր ցանկանա լսել այն, ինչ ասում եմ, բայց ի՞նչ արած: Անցյալ երեկո նրանց տուն հեծանվով գնալիս ես արդեն հասկանում էի, որ դա անում եմ վերջին անգամ, բացի իհարկե մասնակցելուց ծնունդներին, կնունքներին ու Ծննդի նախօրյակի երեկոներին, որտեղ ոչ ոք չի կարող բացակայել: Պատճառն այն չէ, որ Միեն ամեն հարցում ենթարկվում է ծնողներին, կամ որ նրանք գոռոզ են ու անտաշ: Հավատա, որ գիտեմ՝ ինչ եմ ասում՝ ինքս ցածր խավից լինելով: Բայց ի՞նչ ես կարծում՝ ինչո՞ւ են երկուսն էլ՝ էլիոտն ու Ֆրանկան, կակազում: Նրանք քո թոռներն են, Աննա, նրանց այդ անուններն են տվել: Ստեֆանը նույնիսկ լսել չէր ուզում, երբ ես փորձեցի խոսել կակազելու մասին: Կարծում եմ՝ նրա երեխաները չեն կակազում: Պարզապես չեն կարողանում ավարտել նախադասությունը և կանգնում են՝ վախենալով այն բանից, թե ինչ կասի մայրիկը, իսկ նա շատ բան ունի ասելու: Մայրիկը ավելի լավ գիտի. նրանք այնքա՞ն մտերիմ են: Ասում է, որ ամեն ինչի մասին կարող է խոսել նրանց հետ: Չորս տարի նա կուրծք է տվել Ֆրանկային, և տասնչորս տարեկան աղջիկը դեռ մոր ստվերն է: Երբեմն ընտանիքի գլխավորի մնջարանից լսվում է նրանց համատեղ հռիռոցը:



Միեն զբաղված էր խոհանոցում, երբ ես ներս մտա: Նա թույլ տվեց համբուրել իր այտերը և չռեց խմորաթաթախ մատները: Կարծես թաղանթավոր թաթ լիներ: Պիցան պետք է պատրաստվեր իհարկե տանը: Հետո նա հիշեց, որ Գեորգի մահից հետո սա ընդամենը իմ երրորդ միայնակ այցելությունն է, և արագ լվացավ ձեռքերը: Նրա գրկախառնությանը հանձնվելուց առաջ ես մի քիչ ավելի երկար հապաղեցի: Այժմ նա կաշի ու ոսկոր է դարձել, մի քանի տարի առաջ նման էր Օբելիկսին, բայց հետո որոշեց նիհարել: Միեն ամեն ինչ որոշումով է անում, ըստ ծրագրի: Ամեն առավոտ մարզակոշիկներով հատում է թաղամասը, և եթե Ստեֆանը մի բաժակ գինի է առաջարկում, ասում է, որ այլ կերպ կօգտագործի կալորիաները: Սովորականի պես դուռը բացել էր Ստեֆանը: Երբ գալիս են իր ծնողները, Միեն դուրս է թռչում նրանց դիմավորելու այգու արահետին: Մանրախնդի՞ր եմ: Այո, բայց դա ընտանիքից է, Աննա: Մենք մանրախնդիր ենք դառնում, երբ մեզ չափում ենք լոկ ընտանիքի չափով: Պետք է հեռանալ: Հիշո՞ւմ ես, թե որքան էինք ուզում դուրս գալ դրա սահմաններից:

Առաջին անգամ ես ինքնուրույն էի: Կարծես շարժանկարի հերոսուհի լինեի. առաջին անգամ վեր վազեցի աստիճաններով, կողպեցի դուռը, անցա անձանոթ միջանցքով և իմ սեփական առանձին դռնով: Ես վարձակալել էի սենյակը մի կնոջից Սոենդրե Ֆազանվեյ փողոցում: Ստածեցի, որ շքեղ տեղ է, և դա իրոք շքեղ էր, երբ այդտեղ ես տեղափոխվում Ամերիկավեյ փողոցից: Մայրս չէր հասկանում, որ ես մի կնոջ մոտից տեղափոխվում էի ապրելու մի այլ մենակ կնոջ մոտ լոկ այն պատճառով, որ առաջինը իմ ծնողն է: Ես տասնութ տարեկան եմ, պատասխանեցի շատ կտրուկ, և նա այլևս բան չասաց: Կարծում եմ՝ նա թաքցրեց իր գոհունակությունը, որ ազատվեց իմ ներկայությունից իր մեկուկես սենյականոց բնակարանում, բայց ընդամին մտահոգված էր, որ ստիպված կլինի ինքնուրույն վճարել վարձավճարն ու օրվա ծախսերը: Տնտեսել ամեն մի մանրադրամը: Ես աշխատում էի խանութում, իսկ երեկոյան սովորում էի: Քեզ հետ մենք դեռ չէինք հանդիպել, ես մենակ էի աշխարհում, այդ զգացումն ունեի, թեև Ֆրեդերիկսբերգից Վեստերբրո թաղամաս ընդամենը տասնհինգ րոպեի ճանապարհ էր: Այնտեղ իմ մոր տունն էր, բայց այն տեղը չէր, ուր կցանկանայի գալ ավելի հաճախ, քան անհրաժեշտ էր: Մայրս ու ես համերաշխ էինք, բայց երբ մենք վերջացնում էինք իրար պատմել այն, ինչ եղել էր վերջին հանդիպումից հետո, անմիջապես հաստատվում էր լռությունը:

Ես հազվադեպ էի դուրս գալիս գվարճանալու, դրա միջոցները չունեի: Հաճույքով անցկացնում էի երեկոները իմ սենյակում, ընթերցում էի կամ ձայնասփյուռ լսում: Իջեցնում էի ձայնը, որպեսզի չանհանգստացնեմ տանտի-

րուհուն: Երբեք այդքան ազատ չէի եղել, որքան 1963-ի աշնանը Սոենդրե Ֆազանվեյ փողոցի իմ վարձակալած տանը: Կիրակի օրերին գնում էի արվեստի ազգային թանգարան, հիմնականում որովհետև մուտքն անվճար էր. բացի այդ, չգիտեի, թե էլ ինչ կարող եմ անել: Նախկինում երբեք չէի դիտել գեղանկարներ, բայց նկարիչները բարեկամ դարձան, հատկապես նրանք, ովքեր վրձնել էին ծանոթ բաներ, նույնիսկ եթե դրանք նկարել էին կես դար առաջ: Ձկնորսներ, գյուղացիներ, փողոցի մարդիկ, պարզապես քաղաքից դուրս անտառ ու դաշտ, բլրաշատ մարգագետնի կամ բանջարանոցի տեսարաններ: Ինձ թվում էր, թե լսում եմ քանու խշշոցը ծառերի գագաթին և տեսնում եմ ժամացույցի կշռաքարերի շարժումը, երբ վերացած կանգնում էի թանգարանի սրահում: Երբևէ մտքովս չէր անցել, որ գեղանկար դիտելը բարեկրթության կամ բարձր ճաշակի ցուցանիշ է, դա ինձ պարզապես դուր էր գալիս: Կարծում եմ՝ Մորտենը սովորեց ինձնից և այժմ ամեն ինչ գիտի և՛ Վերածնության, և՛ բարոկոյի դարաշրջանի նկարիչների մասին: Հիշում եմ այն օրը, երբ առաջին անգամ նրան տարա Գլխատոտեկետ թանգարան: Նա երկար ժամանակ կանգնեց Մանեի *Օշինդր խմորը* նկարի առաջ, իսկ հետո հարցրեց, թե արդյոք տղամարդու ձախ ոտքը ռետինից է: Ավելի ուշադիր նայելով՝ հասկացա, որ նրա հարցը տեղին է:

Մորտենը սովորականի պես հաճոյանում էր Միեին և պատրաստակամ, անկաշկանդ հյուր էր: Նա կարող է անշնորհք կերպով չափազանց սիրալիր լինել, հատկապես երբ ջանում է քծնել: Միեին հարմարվելու նպատակով երբեմն կարող է անգամ փոխել միտքը նախադասության կեսին: Թեև նախկինում սովորաբար շատ քննադատական ու վիճաբանող էր ծնողների տանը՝ շենքի ձախ թևում: Նա սովորականի պես ուշացել էր: Եվ նույնպես պետք է սովորեր մենակ գալ Թեայի հետ: Ֆրանկան ակնհայտորեն ուրախ էր, որ կարող է փսփսալ հորեղբոր դստեր հետ: Այժմ դստերը պահելու Մորտենի հերթն էր: Ծննդյան տոնից առաջ նրան թվացել էր, թե սիրահարվել է իր գործընկերուհուն, բայց, երբ մոտեցավ Ջատիկը, այդ կինը ի վերջո չուզեց լքել ամուսնուն: Այդ ընթացքում Մորտենը արագ վտարվեց տնից: Գուցե նա իրոք սիրահարված էր, երևի հենց դա պետք է պատահեր, բայց հարցնելը այլևս անիմաստ էր: Եղավ այն, ինչ եղավ, և կա այն, ինչ կա: Նրա նախկին կնոջ անունը Մասյա էր, բայց քեզ պետք չեն այդ բոլոր անունները: Կյանքը շարունակվեց առանց քեզ, տարիներն անցան ճեպընթաց գնացքի պես, որի լուսամուտները լի էին նոր դեմքերով: Նույնիսկ համոզված չեմ, թե կճանաչես քո որդիներին: Նրանք նոր էին գնացել առաջին դասարան: Երբևէ նույնիսկ փորձե՞լ էիր մտածել, ինչպիսին կլինի նրանց հասուն կյանքը:

ՅԵՆԱ ՔՐԻՍՏՈՒԿԱՆ ԳՐՈՆՈՂԱԿԻ

## ՀԱՃԱԽ ՈՒՐԱԽ ԵՄ

Նամակ ամուսնու սիրուհուն

Թարգմանված է անգլերենից

Թարգմանիչ՝ Ալեքսանդր Աղաբեկյան  
Խմբագիր՝ Կարինե Աղաբեկյան  
Կազմի գեղակառույցը՝ Ալեքսանդր Աղաբեկյանի

«Գիտանք» հրատարակչության հասցեն՝  
Երևան, 0002, Մաշտոցի պողոտա 36, բն.14  
հեռախոս/հեռապատճեն՝ 530-629  
Էլփոստ: aaghabekeyan@yahoo.com